# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 30.09.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/02» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐԱԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Գետամեջ 01 հոկտեմբերի 2019թ.

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանը, ի դեմս տնօրեն Ա. Մուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ս. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 30.09.2019թ. կնքված N «ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը **որոշեցին**

1.1 Հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

1.2 Պայմանագրի N 2 հավելվածը՝ աշխատանքների կատարման ժամկետների օրացուցային գրաֆիկը, փոխարինել Համաձայնագրի N 2 հավելվածով /կցվում է/:

### 2. Այլ պայմաններ

2.1. 30.09.2019թ. կնքված N **«ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/02»** ծածկագրով ՀՀ **Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար Գետամեջ համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների** ձեռքբերման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Գետամեջի համայնքապետարան**
**ՀՀ Կոտայքի մարզ, ք. Գետամեջ, 3-րդ փ, 2-րդ փակուղի, 4շ**
**Բանկը՝ ՀՀ ֆՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900112000774**
**Հ/Հ 900112000659**
**ՀՎՀՀ 03301116**
**Ղեկավար Ա. Մուրադյան**

/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ**
**ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2 Մ/Շ 29-1**
**Բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 2479800418310000**
**ՀՎՀՀ 03535122**
**Տնօրեն՝ Ս. Ավագյան**

/ստորագրություն/